



Ի ԳՐԱԴԱՐԱՆ _____ № 1

ՀՐ. ՖԱԼԵԱՆ

«ԱՆՇԵՏԱՑՈՂ ԴԱՐԱՇՐՋԱՆ»

I

ՀՈՂԱՄԱՐԴ

Պատմածք

891.99

\$-17

ՏՊԱՐԱՆ «ՄՈՂԵՐՆ» ԹԵՀՐԱՆ. 1936

891.99
9-17

-6 NOV 2011

«ՆՈՐ ԷԶ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Ա. 59 ֆուժիկ

ՀՐ. ՓԱԼԵԱՆ

Բաշի աշխատանք

«ԱՆՇԵՏԱՑՈՂ ԴԱՐԱՇՐՋԱՆ»

Կար - 59-ի

I

ՀՈՂԱՄԱՐԴ

Պատկեր

5 09 2013

69.525

«ԱՆՇԵՏԱՅՈՂ ԴԱՐԱՇՐՋԱՆ»

ՀՈՂԱՄԱՐԴ

Ասում են՝ երբ մարդիկ ծերանում են, վերստանում են իրենց մանկութիւնը, Դա կոչւում է երկրորդ մանկութիւն: Ասում են նոյնպէս, որ հարիւր տարին անցնելուց յետոյ, նրանք ընդունակ են լինում ակռաներ փոխելու: Այդ էլ շատ հաւանական է: Բայց ի՞նչ կասէք այն մարդկանց, որոնք ծնւում են մանուկ, ապրում՝ մանուկ և մեռնելիս էլ մանուկ մեռնում են:

Այս վերջին տեսակի մարդիկ ի հարկէ քաղաքներում չեն լինում: Դրանց հանդիպելու համար պէտք է գնալ հեռուները, այնտեղ, ուր մեծ-մեծ սարեր կան ու խորը-խորը անդունդներ: Եւ եթէ Աստուած տայ անփորձ, անվտանգ անց կենաք այդ սատանի ճամբաներից, ձեր առջև կը բացւի մի աշխարհ, որ բոլորովին էլ նման չէ մեր սովորական աշխարհին:

Այնտեղ մարդիկ բոլորն էլ ի հարկէ մեզ նման մարդիկ են, բայց միայն մի տարբերութեամբ—նրանք ծնւում են հողից, ապրում են հողով, հողի մէջ և հողի համար:

Մի խօսքով՝ իր տեսակի մի հողամարդ:

Դա հենց ինքը մանուկ մարդկանց աշխարհն է:

Դուք զարմանում էք: Բայց դա բոլորովին էլ զարմանալի չէ: Եւ խնդիրը միանգամայն պարզ կը լինի, եթէ ասեմ, որ սովորական լեզուով նրանց ասում են փերեցի—ահա բոլորը:

Եւ իմ հայրս էլ փերեցի էր:

Այն երեսուն տարին, որ դէպքերի բերմամբ նա ապրեց քաղաքում, բոլորովին չը փոխեց նրա դիմագիծը: Նա քաղաքում էլ նոյն հողամարդը մնաց, ինչ որ էր գիւղում: Ութսուն տարեկան հասակում նա դեռ բոլորովին առոյգ էր: Բայց հերու մեռաւ



24480-59

յանկարծ, մոմի պէս, որ մարում է անձայն, առանց «ընք» անելու: Պարզապէս մի օր պառկեց ու ասաց. —

— Բալէքս, էլ չեմ ուզում ապրեմ, հերիք է...

Ու մեռաւ:

Բայց նրա մահւան պատճառը մեզ համար գաղտնիք չէր: Նա մեռաւ մի դարդից, որ վերջին տարիները նրան հանգիստ չէր տալիս: Եւ չէր էլ թագցնում իր դարդը, — նա մեր մօր՝ իր յիսունհինգ տարւայ կողակից Բասիգուլին կորցնելու մտածմունքից մեռաւ: Ինչ է, թէ մի հինգ տարի իրենից առաջ էր մեռել:

Երբ շատ էր այդպէս մրմռում, մի օր բռնեցինք իրեն ու ստիպեցինք, որ պատմի իր ամուսնութեան մասին: Ի՞նչ մի արտակարգ բան էր եղել էդ մեր մէջը, որի վրայ է դրան վստահում էր: Նա ասեաւ մեր կատակից նեղացաւ, չուզեց պատմել, խռովեց: Բայց մանուկներին խաբելը ի՞նչ դժուար բան է: Մի բաժակ արագ, և նա արդէն պատրաստ էր մեր ամէն ցանկութիւնը կատարելու:

Ու սկսեց:

I

Էդ էն տարին էր, որ գարունքին մեծ սեղաւ եկաւ ու մեր Բողարի ձագերից երկուսը քշեց տարաւ:

Ու էդ էն տարին էր, երբ հէրա իմ պուճուր քուրս կը դնէր ծնկան, վեր-վեր կը թոցնէր ու դարձ օճէնով կերգէր. —

Ատուտիի, պատուտիի,

Բաբին տուտուլը ուտի...

Այ, հենց էդ տարին էլ մեր Բասիգուլին նշանեցին Սար-դարենց Պետրոսի հետ:

— Ինչպէ՛ս, բացագանչեցինք մենք, քեզ հետ չը նշանեցինք.

Սարդարենց Պետրոսն ո՞վ էր:

Նա մեզ ընդհատեց.

— Համբերութիւն ունեցէ՛ք, բալէքս, ու ամէն բան իրա կարգով կ'իմանաք: Եւ շարունակեց.

...Բասիգուլը մեր հարեանի աղջիկն էր, դուռ-դրկից, երկու տարով միայն ինձանից փոքր, շարունակ միասին ապրած, միասին մեծացած: Երբ շատ փոքր էինք, կը նստէինք ու իրար հետ «ապու-ապու» կը խաղայինք: Հիմի էլ միտս են նրա փոշոտ, բոբրիկ ոտները, որ կը ձգէր առաջս ու կասէր. —

— Ապու-ապու քար ապու,

Էւել ինչա, թուրինչա...

— Հէյ գիտի ժամանակներ հա՛, Բըր անցան...

Նա մի բոպէ կանգ առաւ, իրեն հաւաքեց ու շարունակեց.

— Երբ մի քիչ աւելի մեծացանք, ես ձիաւոր դարձայ, իսկ նա՝ պատլիկ նան, որ հինգ հատ սիրուն, թմբիկի բալիկներ ունէր: Էդ բալիկները նրա խրժիկներն էին: Ես կը հեծնէի իմ փայտէ ձիս, շալլադս կը շուրջէի կողերին ու կը թռչէի Բասիգուլ նանենց տուն: Կը հասնէի, ձիուց վեր կը գայի, «բարով-Աստու բարին» կասէի, կը հարցնէի երեխէքի քէֆը, իրա քէֆը: Յետոյ ձիս կը կապէի ծառիցը, շալլադը կը խրէի քամարիս մէջ և, Բասիգուլ նանի հրաւերի վրայ, կը նստէի ծառի տակ՝ հիւրասիրելու նրա խրժկատան ճոխ սեղանից: Էնտեղ, բառի բուն նշանակութեամբ, ամէն ինչ կար — կոտրած խեցիի հրաշալի մի ափսէի մէջ խաշած հաւ, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի կտոր կոճ քար: Մի ուրիշ ամանի մէջ՝ մի սաղ գառը, մի ուրիշի մէջ՝ թագա-թագա, նոր քաղած կանաչի՝ մեր բաղչի խոտերից: Մի չորրորդի մէջ, որ շշի նըմանութիւն ունէր, լաւ թունդ արագ, որով ամենից շատ սիրում էր ինձ հիւրասիրել Բասիգուլ նանը, կարծես դիտմամբ ինձ հարբեցնելու և իմ հարբեցողութեան վրայ ծիծաղելու համար: Բասիգուլ նանը շատ ճաշակով կնիկ էր և ինձ համար պատրաստում էր ամենահամեղ կերակուրները: Ու պէտք էր տեսնել, թէ ի՞նչ սիրալիկ համեցէք էր անում. —

— Կեր, քաւոր ջան, կեր, մի ամաչի, տունը քոնն է, կեր...

Եւ ես, ամենայն քաղաքավարութեամբ, պտղունցովս վերցնելով քարից, տերևից կամ խոտից մի կտոր բան, կը տանէի

բերանս ու սուտ-սուտ կը ծամէի: Հետն էլ կօրհնէի. —

— Աստուած օճախդ չէն պահի, սանամէր ջան, Աստուած էրե-
խէքդ պինդ ձեռով պահի...

Երեխէքի անունը լսելով նրա դարձերը կը նորոգէին: Կը սկսէր գանգատել էդ կրակ ու բոցերից, որ մի րոպէ դնջու-
թիւն չեն տալիս իրեն: Յետոյ ամենափոքրին կառնէր ծնկան, ծիծ կը տար ու լայ-լայ կասէր: Բայց պստիկը չէր քնի, իսկ նա
կը բարկանար, կը յուսահատէր: Ես սիրտ կը տայի նրան, իսկ
նա իմ խօսքերից չէր մխիթարէ: Նկատողութիւն կանէր մէկին, միւսին,
երրորդին, որոնք ներսում, խրժկատանը, իրար միս կու-
տէին: Իսկ էս մէկը, էս ծծկեր գլխակերը հօ շարունակ կը ճնկար.
Աստուած հոգին առնէ՛ր...

Երբ երեխաները շատ ձանձրացրին, մի օր ես բարկացայ
ու ասացի.

— Մեղքը քունդդ է, սանամէր ջան, ընչի՞ էիր էդքան բերում:

էս խօսքիս վրայ նա ունքերը կիտեց ու կոտորուելով ասաց.

— Ի՞նչ անեմ, Աստծու տւածն է, հօ չէի կարող Աստծու
կամքին հակառակ գնամ:

էդ կտրական պատասխանին ես իհարկէ ոչինչ չունէի
ասելու:

Յետոյ էլի ուրիշ խաղեր էինք խաղում, երբեմն մենակ,
երբեմն ուրիշ հարևան տղաների ու աղջիկների հետ: Մեր ընտա-
նիքները շատ սիրով էին իրարու հետ: Իմ մէրս ու Բասիգուլի
մէրը օր չէր լինի, որ կառուց-կտուցի տւած մէկ կամ երկու ժամ
չը գրուցէին իրար հետ: Յետոյ հաց փոխ կը տային իրար, եր-
բեմն էլ աթար կամ ուրիշ բաներ, որ էս կամ էն տունը չէր ու-
նենայ: Բառի բուն նշանակութեամբ էդքան տարիների ընթացքում
մի թթու խօսք չեղաւ մէջները: Էդպէս սիրով, օրինակելի հարե-
ւաններ էին մեր էդ երկու ընտանիքները:

Ես հօ օրւայ մեծ մասը նրանց տանը կանցկացնէի: Մենք
երկուսս էլ անդրանիկներ էինք, բայց մեզանից յետոյ հետզհետէ

աշխարհ եկան ուրիշ երեխաներ էլ, թէ մեր և թէ նրանց տանը.
և երբ նրանք էլ մեծացան, սկսեցին մասնակցել մեր խաղերին:
Բայց ամենից մտերիմները էլի մենք էինք մնում: Շատ անգամ էր
պատահում, գնում էի տեսնում, որ Եղսան քոյրիկը Բասիգուլին
տաշտի մէջ դրած լողացնում է. և իմ ներկայութիւնն էն օգտա-
կարութիւնն էր ունենում, որ ես Եղսան քոյրիկի համար ջուր էի
կրում և էդպիսով ժամանակի մեծ խնայողութիւն էր լինում: Բա-
սիգուլն էդ ժամանակ սապնաջրից կսկծացող իր աչքերն էր տրո-
ւում, թնկթնկում ու մաքրւելուց յետոյ, երբ բաց էր անում աչ-
քերը, մի րոպէ նայում էր ինձ, ժպտում ու յետոյ յանկարծ շուռ
էր գալիս ու շնթում:

— Գնա, ի՞նչ ես կանգնել մտիկ անում. — ու ծածկում էր
դէմքը:

Մէրը ծիծաղում էր, չանչում աղջկան:

— Ի՛հ, ա՛ռ է, բա՛ն է հասկանում կասես...

Իսկ էդ ծածկամտութիւնից իմ դուրս չէր գալիս և ես
հեռանում էի մտքումս փնթփնթալով. —

Ի՞նչ նախանձոտն է...

Ճիշտն ասած, իսկի էլ ինձ դուրեկան չէր նրա էդ տկլոր
տեսքը: Ու շատ անգամ էի մտածել. — ափսոս չի՞ կարմիր չթէ
իր դերիէն հագած Բասիգուլը, ինչի՞ նման է սա... Ու եթէ սի-
րում էի նայել նրա տկլոր մարմին, էդ էլ միայն նրա համար,
որ մէջքի վրայ, երկու թիկունքի մէջտեղը, մի հաջամաթի հետք
ունէր, որ չը գիտեմ ինչու ինձ խելքահան էր անում: Դա մի
զարմանալի հաջամաթ էր և զարմանալի տպաւորութիւն էր անում
ինձ վրայ: Թւում էր, որ իրարու կողքի շարւած էդ զուգահեռ
զծերը իսկի էլ նշտարի հետքեր չեն, այլ դալամով քաշած ինչ որ
նկար: Վերջ ի վերջոյ ես եկայ էն հզրակացութեան, որ դա մի
ծաղկի նկար է, շատ սիրուն ու շատ հոտաւէտ մի ծաղկի, որ ես
տեսել էի մեր սարերում: Ու էդ ծաղիկը ինչքան էր սագում նրա
մէջքին, գիտէ՛ք: Ամբողջ տկլոր Բասիգուլի վրայ էդ մի հատիկ

ծաղիկն էր ինձ դուր եկողը: Ու էդ էլ խնայում էր ինձ:

Հայրս հառաչեց, ծանր-ծանր գրպանից հանեց աղուլուր և սրբեց բերանն ու քիթը: Կարծեմ նա ուզում էր աչքերն էլ սրբել, բայց ինչ որ պատճառով, չարաւ: Յետոյ շարունակեց.—

— Էս բոլորը իհարկէ լինում էր մեր շատ վաղ տարիներում, երբ մենք ընդամենը չորս կամ հինգ տարեկան էինք: Այնուհետև էդ բոլորը արգիւլեց: Եւ ամենից առաջ արգիւլողը Բասիգուլի մէլը եղաւ, Եղսան քոյրիկը, որ իր մայրական բնազդով կարծես ժամանակը եկած համարեց պաշտպան կանգնելու իր աղջկայնա-մուսին: Երբեք չեմ մոռանայ, թէ ինչպէս մի օր նա դազազած ուղղակի դուրս վռնտեց ինձ տնից, բղաւելով:—

— Գնա, մէկ էլ էրեխիս լողացրած վախտը չը դաս կանգնես էստեղ:

Էն ժամանակ ես ենթադրեցի, որ Բասիգուլը իր յայտնի նախանձով վարակել է և իր մօրը: Ու այնուհետև էդպիսի դէպքերում մէկ էլ չէի փորձում գնալ նրանց տուն: Էդ մասին կարծեմ մեր մայրերի մէջ էլ գաղտնի մի համաձայնութիւն էր կայացել:

Երբ բոլորովին մեծացանք ու խելքներս գլուխներս եկաւ, խրժկախաղն ու հիւրասիրութիւնն էլ թողինք: Մենք հիմա լուրջ մարդիկ էինք և քաջուում էինք իրար հետ երեխայաբար խաղալուց: Բնազդի նման մի բան մեզ ասում էր, որ հիմա մեր խաղը, խօսքը և նիստուկացը մեր սեռակիցների հետ պէտք է լինի: Մենք սկսեցինք հպարտութեամբ նայել իրարու ու էդպէս, քիթներս ցցած, անցնում էինք իրար կողքից ու հազիւ միայն մի կամ երկու բառ փոխանակում:

Իսկ իմ մէջ դեռ երկար մնում էր նրա թիկունքի էդ ծաղիկ բուրմունքը, որը, հաւատացած եմ, էլ երբեք չը պիտի տեսնէի: Եւ որովհետև էլ երբեք չը պիտի տեսնէի, մի քանի տարի անց, էդ էլ սրբեց, գնաց իմ յիշողութիւնից:

Էդպէս էր բանը, երբ մի օր, ճիշտ էն տարին, որ օդորմածիկ հէրս, իմ պուճուր քուրս ծնկան դրած, պար կածէր ու լսում

տուլի» երգը կասէր—մեր Բասիգուլին նշանեցին Սարգարենց Պետրոսի հետ...

II

Էդ Սարգարենց Պետրոսը մի խոժոռ մարդ էր: Մեծ տա-րիք չունէր. կը լինէր ընդամենը քսանմէկ-քսաներկու տարեկան, բայց մեծ, երկար բոյ ունէր, որ տեսնողին կարծել կը տար. երեսունն անց: Մարդը մեղաւոր չէր, ցեղովին էդպէս էին—լանդահոռ: Ու էդպէս էլ ասում էին—լանդահոռ Պետրոս: Յետոյ՝ մեծ բերան ունէր, լէն քիթ ու հաստ ազդրեր: Երեսին մազ չը կար: Ճիշտ է, գիւղերում մազը ուշ է բանում ու բուսածն էլ հողի, արեւի գոյն ունի, որ չի երևում, բայց նրա վրայ էդ չերեացող մազն էլ չը կար: Հենց դրա համար մէկ-մէկ էլ քոսա կասէին նրան: Գլխին, ընդհակառակը, էդ անտէրից ինչքան ուզես կար, ու հաստ, ու ցից-ցից—ճիշտ ու ճիշտ խոզի ձար:

Ինչ երկարացնեմ, անունը դուրս էր եկել, որ սիրուն տղամարդ չի էդ մեր Բասիգուլի նշանածը: Բայց դու տես, որ էդ բոլոր թերութիւնները կորչում էին և նա դուրս էր գալիս գիւղի ամենագեղեցիկ ջահէլը, հենց որ իմանում էիք, որ Սարգարենց Պետրոսը Սարգարենց Սահկի տղէն է: Իսկ Սարգարենց Սահկը հարուստ մարդու համբաւ ունէր:

Միւս կողմից՝ աղջկայ մասին գիւղում սկսեցին լուրեր պատել, թէ գեղեցիկ է: Գիւղում աղջկայ գեղեցիկ կամ տղեղ լի-նելու մասին կիմանան միայն նշանը դնելուց յետոյ: Մինչ էդ՝ ոչ ոք ոչինչ չի ասի: Աղջիկը քանի տանն է՝ թրթուր է, հենց որ նշանեց՝ թիթեռնիկ կը դառնայ: Ու ասում էին, որ Բասիգուլը սիրուն աղջիկ է և հենց էդ սիրունութեան պատճառով էլ Սարգարենց Սահկը համաձայնել է առնել իր աղին: Ես իհարկէ սիրունութեան ու աղեղութեան մասին ոչինչ չը գիտէի: Ինձ համար Բասիգուլը միշտ էլ մնում էր նոյն Բասիգուլը, ինչ որ եղել

էր երկու տարեկան հասակից: Բայց խալիւր ասում էին ու միա-
ժամանակ որոշ մարդիկ էլ ամսոսում, որ էդպէս սիրուն աղջկան
տւել են էդ լանդահոռին: Էդ ասողներն անշուշտ էրւած տեղեր
ունէին: Մէրս ասում էր, որ նրանք աղջկատէր են ու նախանձու
են էդպէս ասում. ու աւելացնում էր. —

— Տղամարդու սիրունութիւնը իր ջէքն է...

Ես իհարկէ էդ բոլորին համաձայն էի, բայց ջէքից աւելի
ես հաւանում էի էդ տղայի մարդավարութիւնը, վարեցողութիւ-
նը: Չը նայելով հարուստ, տգեղ և տարիքով ինձանից մեծ լինե-
լուն, պատւական տղայ էր էդ փեսայ Պետրոսը և հենց առաջին
օրից, երբ ես մօտեցայ նրան, նա ինձ պատիւ տւեց, ոնց որ իր
նշանածնից լաւ բարեկամին:

Ինչ վերաբերում է Եղստն քոյրիկին, պարզ տեսնում էի,
որ խեղճ կինը իր փէսի գլխովը պտոյտ է գալիս. և պարզ է թէ
ինչու—էդպիսի փեսայ նրանք իրենց օրում չէին կարող երազել:
Քեանք մարդիկ էին ու էդ հանդիպումը նրանց համար ճիշտ որ
Աստուծոյ մի ողորմութիւն էր:

Նոյնիսկ աղջիկը տարւած էր երևում իր նշանածով: Էդ
ես նկատում էի նրանից, որ նշանւելուց անմիջապէս յետոյ նա
դադարեց ինձ բարեկրօց: Դէ՛, կնիկ էր դառնում, մեղք չունէր:
Դիւղում երբ աղջկան նշանեցին՝ կնիկ կը դառնայ: Աղջկամէրը
կասի. —

— Բալա ջան, հմի պտի ծանդը կենաս, նշանած աղջիկ ես,
էգուց-էլօր կը պսակես: Էդ խրժիկ-մրժիկդ էլ հաւաքիր դէն դիր:

Ու խեղճ երեխէն խրժիկ-մրժիկը կը հաւաքի, դէն կը դնի,
ու կնիկ կը դառնայ: Դեղի օրէնքն էդա: Հէ՛յ գիտի, հա, գեղում
երբ հորթակովը երեք-չորս տարեկան դառնայ, գիտեն, որ պէտք
է յղացնեն՝ նոր հորթ ու կաթ ստանալու համար: Էդպէս էլ ձին,
էջը, ոչխարը: Ու աղջիկն էլ երբ տասներեք ու տղէն քսան տա-
րեկան դարձան, պէտք է պսակեն՝ աշխատաւոր ձեռք աւելացնե-
լու համար: Քաղաքի ղալդի էնտեղ սէր-մէր գոյութիւն չունի:

Բայց այստեղ մենք ընդհատեցինք մեր հօրը. —

— Հայրիկ, բա դու ըսկի մի բան էլ է չէ՞ր հասկանում. ախր
էնքան տարւայ մօտիկութիւնը, մտերմութիւնը... Քու ընկերու-
հիդ էր ախր...

Նա ծանր-ծանր նայեց մեզ և ասեա հասկացաւ մեր հար-
ցի շարժառիթը: Մենք երեսուն տարուց ի վեր արդէն քաղաքի
մարդիկ էինք, քաղաքացու բարքերով և հասկացողութիւններով:
Մենք վաղուց էինք դադարել հողամարդ լինելուց: Ու սիրոյ և
նման բաների մասին այնքան բաներ գիտէինք...

Նա պատասխանեց. —

— Չէ՛, բալէքս, տասնըհինգ տարեկան երեխէն գեղում բան
չի հասկանայ: Քաղաքն ուրիշ է. էստեղ տասը տարեկանն էլ ա-
մէն բան գիտի: Դեղում շատ անգամ պսակւում են ու դեռ էլի
բան չը գիտեն: Էնտեղ հասկացողները մեծերն են, երբ ժամանա-
կը եկաւ՝ նրանք իրենց բանը գիտեն ու դու էլ, ուզես-չուզես,
պիտի գիտենաս: Հիմի կասէք թէ՛ բա որ մեծանան ու իրար չը
հաւանեն... Սուտ է, հողի մարդկանց մէջ էդ տեսակ բաներ չը
կան, ինչ որ դամաթ է, էն էլ կը լինի: Ես իմ օրում տեսած չը կամ,
որ մեծացած, մեծ կնիկ կամ մարդ դարձած ժամանակ էլ էդ «սէր»
ասածդ մտած լինի մարդ ու կնկայ մէջ ու խառնակչութիւն գցած:
Պարզապէս առանց «սէրի» էլ եղաւ են գնում, ապրում են ու խա-
ղաղ ծերանում: Հողի մարդկանց բանը էդպէս է...

Ու ես էլ, ոնց որ գեղի հալալ երեխայ, ըսկի էլ չը նե-
ղացայ, որ Բասիգուլը հպարտացաւ ու ինձ չէր բարեկամ: Ես
նոյնիսկ մի քիչ ուրախացայ, որ իմ լաւ հարեանուհին նշանւում է.
մտածում էի՝ հարսանիք կունենանք: Դեղում հարսանիքը հարս
ու փեսից աւելի երեխէքին է ուրախացնում: Մանաւանդ ես մտա-
ծում էի, որ իբրեւ աղջկատիրոջ ամենամօտիկ բարեկամը, բոլ
չամիչ ու փշատ կուտեմ ու քաղցր չայ կը խմեմ:

Բասիգուլի բարեհաճութիւնը կորցնելուց յետոյ, ես այն
փոխարինեցի Պետրոսի բարեկամութեամբ: Առաջուց էլ անծանօթ-

ներ չէինք, բայց հիմա աւելի մօտեցանք:

Եւ որովհետեւ արդէն բաւական մեծ էի և կանոնաւոր մասնակցում էի տան ու դրսի աշխատանքներին, արտը եղած ժամանակ մէկ-մէկ հանդիպում էի նրան: Փեսայ Պետրոսենց արտը մերինից շատ հեռու էր և իրար հանդիպելով մենք խօսում էինք, շաղակրատում: Աւելի շատ իհարկէ ես էի խօսում, իսկ նա, թէև ինձանից մեծ, սուս ու փուս աւանջ էր դնում: Յաճախ խօսքը դառնում էր Բասիգուլի վրայ և ես, օգտւելով առիթից, դովում էի նրան: Դա իհարկէ կրկնութիւնն էր իմ ծնողների արածի: Իմ տասներհինգ տարեկանի խելքով ես էլ ուզում էի իմ բաժինն ունենալ նրանց կապի ամրապնդման մէջ:

Էսպէս ամէն ինչ լաւ էր գնում, մինչև ամառն անցաւ, քաղը տուն բերինք, եկան ձմեռայ ցուրտ օրերը, երբ գիւղացին մի քիչ շունչ է առնում: Եւ շունչ առնելով սկսում է մտածել իր մարմնի մասին, իր հոգու մասին, իր վայելքի մասին: Զրոյցների շրջանն սկսում էր: Հարսանիքների, կնոնքների. Ու նաև մահերի: Ամառը աշխատանքի ձեռքից ժամանակ չը կայ ոչ հարսանիք անելու և ոչ մեռնելու: Ամառը դիւրում չեն էլ մեռնում: Պարզապէս երկմտութիւնը՝ ցանքսի, կալի, կուտի յաջողութեան կամ անյաջողութեան մասին նրանց չի թողնում որ մեռնեն: Ձմեռն ուրիշ բան է: Ձմեռն ամէն ինչ վերջացած է ու դրսի ոչ մի երկմտութիւն չը կայ: Եւ որովհետեւ պարապ են, կամ հարսանիք պիտի անեն և կամ, եթէ աջալը եկել է՝ մեռնեն: Դրան ի հարկէ նպաստում է և ցուրտը, որ իր հետ բերում է սաթլճամ, սանջու և կամ մի ուրիշ անսպասելի ցաւ, մարդկանց տեղաշոր գցում ու տասներհինգ օրւայ վրայ գերեզման տանում:

Էդպէս, ձմեռը որ եկաւ, Սարգարենք ու Եղսան քոյրիկենք սկսեցին հարսանիքի պատրաստութիւն տեսնել: Երկու ընտանիքներն էլ ուրախ էին, ծիծաղը երեսներին կաթում էր: Եղսան քոյրիկը հօ փոխանը ոտներն էր ընկել: Հեշտ բան չէր՝ առաջին ուրախութիւնն էր տան մէջ: Բոլոր պատրաստութիւնների

մասին նա պարտք էր համարում մօրս էլ մասնակից դարձնել: Խորհուրդ էր հարցնում հիւրասիրութեան կարգի, ջնէզի, շորի-շրթի և հագար ու մի մանր բաների մասին: Եւ երկուսն էլ նորից մի անգամ կտուց կտուցի տաժ երկար ժամերով դնում-վերցնում էին և երկուսն էլ համարեա միատեսակ եղբակացութեան գալիս:

Էդ ժամանակ էր, որ մի օր, հանդից տուն գալիս, փողոցում հանդիպեցի փեսայ Պետրոսին: Անմիջապէս մօտեցայ և ըստ իմ սովորութեան սկսեցի շատախօսել: Սիրալիլ լսում էր, ինչպէս միշտ: Ես իհարկէ խօսքն անմիջապէս դարձրի Եղսան քոյրիկենց ընտանիքին. և նա այդ օրը զարմանալի մի ուշադրութեամբ էր լսում: Ես ոգևորւեցի և այս անգամ էլ սկսեցի գովել Եղսան քոյրիկին՝ իրեն, յետոյ՝ ամուսնուն, յետոյ էլ երեխէքին: Եւ դուրս եկաւ, որ բոլորն էլ էդ օրհնւած տան մէջ ընտրովի, նմանը չունեցող մարդիկ են: Բայց նա այնպէս ժպտուն էր այդ օրը: Մօտալուտ հարսանիքը երևում է բարձրացրել էր նրա տրամադրութիւնը: Ես առաջ գնացի և սկսեցի պատմել մեր սերտ բարեկամութեան մասին նրանց ընտանիքի հետ ու նաև էն մասին, որ մենք՝ ես և Բասիգուլը միասին ենք մեծացել: Եւ ամենից վերջ, որպէսզի լաւ տաքացրած լինեմ էդ բարի տղային՝ իր նշանածի վրայ, խելքիս փչեց ու ասացի, որ Բասիգուլը շատ սիրուն աղջիկ է:

— Ի՞նչդ, զարմացաւ փեսայ Պետրոսը—դու իրդիան գիտես...

Ու շարունակում էր ժպտալ մեծահոգի մի ժպիտով:

— Բահ, ե՞ս չիմանամ, փոքրուց գիտեմ... Աչքերը փալափալա, ունքերը կեռ, ջանը սիւստալ...

— Ձանը սիւստալ,— աչքերը չոկով դարձաւ ինձ փեսայ Պետրոսը ու մի քայլ առաջ եկաւ:

— Բան, ջանը լուսի պէս սիւստալ է:

Նրա աչքերից կարծես կայծիկ ցայտեցին և նա, անասելի հետաքրքրւած, հարցրեց.—

— Բա դու ի՞նչ գիտես...

Նկատելով նրա ոգևորութիւնը, ես աւելի ոգևորւեցի և

ուղղակի ուղեցի նրան յայտնի դարձնել իւր նշանածի բոլոր գաղտնիքները: Եւ դա հպարտութեան մի գեղեցիկ նիւթ թւաց ինձ: Ես բացադանչեցի.—

— Ես ինչ դիտեմ... ես աչքովս եմ տեսել... տկոյր վախտը...

Ու կռնալով ականջին փսփսացի.—

— Ու մէջքին էլ մի սիրուն, շատ սիրուն հաջամաթի տեղ ունի, թամամ կասես դալամով քաշած ծաղիկ ընի, որ տեսնես՝ խելքդ կը գնայ:

Ժամանակով իմ էլ խելքս գնացել էր էդ ծաղիկից, բայց արդէն վաղուց մոռացել էի: Ու հիմա ռոտեղից միտս եկաւ էդ գահրումարը: Որովհետեւ խկապէս որ էդ խօսքիս վրայ տղայի խելքը թռաւ, գժւեց: Մի կատաղութիւն եկաւ վրան, որ ես կեանքումս չէի տեսել, աչքերը բոցավառեցին, դոյնը գցեց, ցից մագերէսը գտակի տակից աւելի ցցւեցին: Յետոյ տեսայ թէ ինչպէս բռնեցքը սեղմեց, բարձրացաւ, ինչպէս միւս ձեռքով բռնեց կուրդս և ինչպէս՝ մէկ, երկու, երեք, և այլևս նրա հուժկու հարձակումները անհաշիւ տեղում էին ինձ վրայ՝ գլխիս, կողերիս, բերանիս, կրծքիս, և իմ «վայ-վայ»-ը էնպէս բարձրացաւ, որ ես էլ ոչինչ չը հասկացայ ու մէկ էլ երբ աչքերս բաց արի, տեսայ, որ մեր տանն եմ ու մէրս, արտասուածքով աչքերով կռացած վրաս, քթիս ու բերնիս արիւններն է սրբում:

— Իսկապէս որ լաւ անուն էին դրել նրան— Լանդահոռ...

III

էդ էր: Էլ դրանից յետոյ ամէն ինչ տակնուվրայ եղաւ: Ես ամբողջ մի շաբաթ պառկած էի անկողնում և ականատես, թէ ինչպէս մէրս շարունակ ծնկներն էր ծեծում և ծնած օրս անիծում: Բայց մէկ-մէկ էլ, ասես ուշքի գալով, յետ էր դառնում ու լացակումած աչքերով վշտում վրաս, ասես նորից գտած լինէր ինձ: Քնքշութեան էդ յանկարծական բռնկումները հասկանալի

էին— անդրանիկ դաւակն էի, կող ու կուշտս ջարդւած, երեսիս ու գլխիս վրայ խոշոր ուռոյցքներ, աչքիս մէկը կապտած, միւսը բուրովին փակ: Երևում է, որ փեսայ Պետրոսի բռնեցքները ոչ մի կողմից պակաս տեղ չէին թողել վրաս: Բայց թէ էդ բոլորից յետոյ ինչո՞ւ էր անիծում ինձ, ինչո՞ւ էր Եղսան քոյրիկի անունը տալով ծնկները ծեծում, — էդ մէկը մի քիչ դժւար էի հասկանում: Եւ յետոյ դժւար էի հասկանում նաև, թէ ինչո՞ւ էի ծեծել, ի՞նչ մի վատ արարքիս համար: Ընդհակառակը, ամէն կերպ ընդառաջ էի գնացել էդ տղին, ամէն կերպ սիրտն առնում էի: Իսկ էդ կուպիտը, փոխանակ շնորհակալ լինելու, քթիկ էր ինձ:

Բայց լուրերը վատ էին դալիս: Եւ որովհետեւ ես էլ դէպի լաւն էի գնում, մէրս վերջապէս, իր քնքշութիւնները մի կողմ դնելով, լեզու ելաւ: Ու թերորդ օրը նա յարձակեց վրաս.

— Դու էդ ի՞նչ դալադներ ես անում, հա՛, գետի՛նը մտած, մի մատ տեղովդ գլխիցդ մեծ բաներ ես բռնում:

Ես լաց հղայ: Սիրտս ուռած էր: Վերաւորանքը, որ հասցրել էր ինձ Պետրոսը, կոկորդիս դէմ առած՝ խեղդում էր ինձ. և ես պոռթկացի.

— Ես ի՞նչ եմ արել, նանի, ես նրան ոչինչ չեմ արել...

— Զուռնամարդ էլած, էլ բան է մնացել, որ չանես, երեք տուն իրար խառնեցիր, նշանածին հարսնացւից բաժանեցիր...

Ես շարունակում էի հեկեկալ, առանց ոչինչ հասկանալու:

— Ես ի՞նչ եմ արել որ... ես...

Բայց մայրս անողոք էր, նա բղաւեց.—

— Զէնդ կտրիր, ո՛չ էլած, տեղն էր, որ Պետրոսը շանսատակ անէր քեզ, ծեծելն ի՞նչ է որ... Բոյին մտիկ ու բերնի խօսքերին: Դու ռոտեղ ես տեսել Բասիգուլի սիպտակ ջանը, մէջքի հաջամաթը, էն էլ դալամով քաշած ծաղիկի նման...

Ես յանկարծակիի եկայ: Ծեծը, որ էնքան անտեղի կերպով տւել էր ինձ փեսայ Պետրոսը, էնպէս չէր դեղ իմ աչքում: Նրա վարկը, որքան էդ գաղտնիքի երևան հանելը: Էդ գաղտնիքը

ես նրա ականջին էի փսփսացել, իսկ նա աշխարհքովը մէկ չաւ էր արել: Ու մտքումս ափսոսացի էն բոլոր լաւութիւնները, որ արել էի նրան:

Բայց դա պատճառ չէր, որ ես ընկճէի: Մօրս թերահաւատութիւնը նոյնիսկ ինձ վրդովեց և ես, աչքերս սրբելով, վըճառական կերպով յայտարարեցի.—

— Հօ սուտ չեմ ասում, հաջամաթը էս իմ աչքովս եմ տեսել, շատ սիրուն հաջամաթ ունի, մյ, ըստեղին...

Իմ էդ վճռական պնդումիս վրայ մէրս շփոթեց և ձեռքը տանելով բերանին՝ բացագանչեց.—

— Վճւյ, խողը գլխիս, քան, էլի նորից է ասում, դրուստ որ էս երեխէն գժեւի է...

— Ըսկի էլ չեմ գժեւել, Բասիգուլի մէջքին հաջամաթ կայ, թէ չեմ հաւատում, գնա, բաց արա տես...

Իմ էդ յանդգնութեան վրայ մէրս օշմարէ մինչև քթի կէսը քաշեց ու բոլորովին գլուխը կորցրած, բղաւեց.—

— Ձէնդ կտրիր, ջունամարգ էլած, բոյիցն էլ չի ամաչում, դու ճրտեղ ես տեսել նրա հաջամաթը...

— Լողանալուց, յայտարարեցի ես:

Մէրս արդէն սկսում էր ինքն իրեն կորցնել: Նա լրջօրէն դէս-դէն էր նայում և ինձ թւաց, որ փայտի կամ ունելիի ետևից է ընկած: Այդ ժամանակ ես յուսահատ աղաղակեցի.—

— Ընչի՞ ես նեղանում, նանի ջան, հօ սուտ չեմ ասում, մյ, պատիկ վախտս, երբ Բասիգուլը լողանալուց գնում, թամաշա էի անում, էն վախտն եմ տեսել, ես ի՞նչ մեղք ունեմ...

Տեսայ, որ մէրս մի քիչ ուշքի եկաւ, բայց չուզեց ցոյց տալ: Բայց գուցէ և չէր կարող ցոյց տալ, որովհետև դրսի դէպքերը, երևում է, անասելի վատ կերպարանք էին ստացել: Եւ նա գաղազած շարունակեց.—

— Դու շատ գլուխդ քարովն ես տւել, որ պատիկ վախտդ էդ տեսակ բաներին թամաշա ես արել ու հիմի էլ վեր ես կացել

պատիկ վախտադ հարամգադութիւնները խալխի բերանն ես գըցում: Ձէս իմանում, որ արածդ վատ բան է...

— Վատ բան է,— զարմացայ ես:

— Վատն էլ խօսք է, փշացած, կեղտոտ մարդու բան է:

Բայց ես չէի ուզում մօրս ասածները հալած իւղի տեղ ընդունել: Ես թերահաւատեցի:

— Ընչի՞, բա ես նրան հօ վատ մտքով չեմ ասել, ես ուզում էի ասեմ, որ Բասիգուլը սիրուն աղջիկ է...

Իսկ մէրս չէր համոզւում: Կողին էր ընկել ու չէր համոզւում: Եւ շարունակում էր իր անէծքները, հայոյանքներն ու ախ ու վիշը: Ես, տեսնելով որ ոչ մի կերպով չի կարելի կոտրել էդ գաղազած կնկան, լռեցի: Մանաւանդ որ էդ բոլորին ներս էր մտնում հէրս՝ տխուր ու գլխիկոր. և մէրս, նրան տեսնելով, ինձ թողեց ու համարեա յարձակումով հարցրեց.—

— Հը՞, ի՞նչ էլաւ:

— Ոչինչ, միթմրթաց նա, Սհակ ամին ինձ որ տեսաւ, քիչ էր մնում գզգզի:

— Վճւյ, խողը գլխիս, քա ընչի՞...

— Ասում է քու տղէն իմ տղիս նամուսն է տարել, ես Սարգարենց Սհակը չլնեմ, ասում է, թէ էդ բանը ձեզ ուտացնել չը տամ:

— Վճւյ, քոռանամ ես, էդ էր պակաս,— բացագանչեց մէրս ու դառնալով՝ լայն բռով չանչեց ինձ:

— Ո՛չ մեծանաս դու, հչ, ը՛հ, դէ գնամ...

Նա վերջացրեց:

Հիմի էլ հէրս սկսեց: Բայց ես հօրիցս չէի վախենում: Բարի մարդ էր օղորմածհոգին ու էդքան տարի ձեռք բարձրացրած չուէր մեղ վրայ: Նա միայն իր բարիութիւնը արտայայտում էր սպառնալիքով, որոնց հրքեք էլ չէր իրագործում: Վերջին դէպքից յետոյ նա ինձ միշտ միևնոյն սպառնալիքներ էր տալիս.—

— Ի՛նչ անեմ... ավաճա որ զոհեմք էր անել չի թողել վրէպ:



թէ չէ դու իմ ձեռիցս սաղ չէիր պրծնի...

Էդ նոյնը կրկնեց և էսօր ու հանգստացած անցաւ իր գործին:

Տասերորդ օրը ես վեր կացայ ու ման էի գալիս սենեակում: Դյուլիսս դեռ փաթաթւած էր և չը գիտեմ ինչու, ինձ արգիւրում էին փողոց դուրս գալ: Երևի մի բանից վախենում էին: Դէպքերը սակայն դառնում էին արագ ընթացքով: Նոյն օրը եղսան քոյրիկը՝ եկաւ մեր դուռը և բերնից եկածը համրեց մօրս: Թէ դուք ձէն-ծպտուն հանեցիք, մէրս էլ հանեց: Էլ ինչէր չասաց. — Էլ բօզ, էլ թօկը կտրած շուն, էլ բիւքուռ, անհամուս ու ես ինչ գիտեմ ինչեր: Ես կուշ էի եկել ծալքատեղի վարագոյրի ետեւը, ուր ինձ թագցրել էր մէրս, ու դուրս չէի գալիս: Ու դարմացած էի—միթէ էդքան կատաղութիւն կարող էր ունենալ էդ բարի կիներ և միթէ էդքան տարւայ մեր լաւ բարեկամութիւնը կարող էր էդ մի դատարկ բանով ոչնչանալ: Նա գնաց և երկրորդ օրը մարդն եկաւ: Հօրս կանչեց փողոցի դուռը ու կնկայ պակաս թողածը ինքը լրացրեց: Ու սպառնում էր: Իր աղջկայ պատիւը ոտի տակ գցողին նա սպառնում էր սաղ չը թողնել: Մի հատ գիւլաւ էր իմ ջանը: Բասիգուլի փոքր եղբայրներն ու քոյրերն էլ իմ փոքր եղբայրներիս ու քոյրերիս հետ էին թշնամացել: Ու ծեծկռտում էին՝ փողոցում, դրան առաջ, ջրի ճամբին: Եւ նրանք էլ իրենց կռիւներով մի կողմից էին թէժացնում կրակը: Մի խօսքով՝ մի ահագին դալմադալ էր ընկել գեղի մէջ:

Բայց էդ բոլորի մէջ ինձ համար ամենից ցաւալին մնում էր փեսայ Պետրոսի նշանը յետ տալը.—որովհետեւ նա իսկապէս նշանը յետ էր տուել: Դա ինձ անասելի վիշտ էր պատճառում: Ու մտածում էի,—խեղճ Բասիգուլ, դու հօ զրկեցիր քո նշանածից, բայց ես էլ պակաս բաներից չը զրկեցի: Էնքան յոյսեր էի դրել քու հարսանիքիդ վրայ, ուր առատ չամիչ ու փշատ պիտի ուտէի...

IV

Ես իհարկէ յետոյ իմացայ մանրամասնութիւնները, երբ միջնորդը մի քիչ պարզեց և մի գեղեցիկ օր երկու «րիշսֆիդ», մեր սպիտակամօրուս տէրտէրին առաջները դցած, ծանդր ու մեծ, համեցէք արին մեր տուն: Խոստովանւում եմ, մինչ էդ իմ օրը օր չէր տան մէջ: Էլ թուքումուր չը մնաց, որ երեսիս չը շարտէին, էլ անէծք չը մնաց, որ չը տային ինձ հերթով՝ մէկ մէրս, մէկ էլ մեր ամբողջ ազգականութիւնը խօսքը մէկ արած: Նրանք ժամը մէկ ընկնում էին տուն և, նորութիւններ իմանալու պատրաստ, կարծես իրաւունք համարում ինձ անարգելու: Հէրս հօ իր միալար սպառնալիքը հիմա կրկնում էր ամէն առիթով.—

— Մէի, թէ Պետրոսը էնքան ջարդած չէր ըլնի քեզ...

Եղսանեց տան շիւանն էլ մի կողմից էր պակասը լըրացնում: Ես մեր պատի ետեւից ամէն օր լսում էի Եղսան քոյրիկի անէծքներն ու ուշուցները: Եղսան քոյրիկը մանաւանդ չէր միթեարւում նրա համար, որ կորցրել էր Սարգարենց տղի նման մի հարուստ փեսացու: Ու քֆրում էր մօրս, ինձ, մեր օճախը, մեր օխտը պորտը...

Բայց վերջին երկու օրը մեր տանը, ինչպէս և մեր շըրջապատում, մի դարմանալի խաղաղութիւն էր տիրել: Ի՞նչ էր էդ յանկարծական խաղաղութեան պատճառը, ես չը գիտէի: Եղսան քոյրիկը հօ բոլորովին լռել էր: Դրա հետ միասին հէրս ու մէրս—նկատում էի—մէկ-մէկ քաշւում էին անկիւնները ու խորհրդաւոր քչփչում: Ի՞նչ էին խօսում նրանք—նոյնպէս ոչինչ չը գիտէի և էդ խորհրդաւորութիւնը ինձ վախեցնում էր: Ինձ նոյնիսկ թոյլ տւին փողոց դուրս գալ, առանց սակայն շատ հեռուները գնալու իրաւունքի: Դա ինձ անչափ ուրախացրեց: Ուրեմն ամէն ինչ լաւ էր գնում: Ես Բողարիս վերցրած առաջին անգամ անցայ փողոց և այնտեղ, Եղսան քոյրիկենց դրան առաջ—ինչ զուգադիպութիւն—տեսայ Բասիգուլին, որ փողոցում թառած իրենց հաւերն էր

տուն քշում: Ինձ որ տեսաւ շփոթեց, երեսը շուռ տաւ և խըրտնած հորթի պէս ներս ընկաւ: Ընդամենը ասած, էդ բանը ինձ դուր չեկաւ: Ու էնպէս ծանր զգացի ինձ... Տասը լոպէ էդպէս կանգնելուց յետոյ, փողոցը ինձ անասելի տխուր թւաց և ես, կանչելով Բողարիս, նորից ներս մտայ: Ու ամբողջ ժամանակ մտածում էի.— Բասիգուլը ինչո՞ւ էդպէս դուռն երեսիս փակեց, երևի խիստ նեղացել է ինձանից:

Ահա էդ դուրսից ամէջ էին գործերը, երբ եկան ընդհատփողները, տէրտէրի հետ միասին: Եկան ու առօք-փառօք բաղմեցին մեր մեծ «օթախի» վերի ծայրին, դռակները վրայ: Ամէն ինչ լուռ խորհրդաւորութիւն էր բուրում: Տէրտէրը իւր մեծ գաւազանը, որից նա երբեք չէր բաժանւում, առջև՝ ստեղծի տակ թագցնելուց յետոյ, շփեց մօրուքը, լուրջ դէմք ընդունեց և աչքով արաւ, որ երեխէքին հեռացնեն: Երբ մենք դուրս էինք գալիս, նկատեցի, որ պատուաւոր հիւրերը ծուռ-ծուռ էին նայում վրաս: Ու մաքնելու երևի ասում էին.

— Էս մի մատ լակիտն է եղել էս բոլոր զաւակներին պատճառը...

Մենք դուրս եկանք և ես, իմ սովորական անհոգութեամբ, սկսեցի խաղալ մեր Բողարի հետ: Փոքր եղբայրներս ու քոյրերս շրջապատել ու մեր խաղին էին նայում: Համեմատական հանգըստութիւնը հանգստացրել էր և իմ ջղերը և ես ժամանակը եկած էի համարում մի քիչ զատրճանալու:

Էդպէս տակեց տասնըհինգ լոպէ: Յետոյ ինձ կանչեցին ներս: Գլխիս փաթաթաններից մեծ մասը բացել էր, ուռոյցքները նստել էին, վերքերը լաւացել: Ծակաւոր միայն մի ուռոյցք յամուռ էր մնալ և դրա համար էլ նա պահում էր իր վրայ մի բարակ լաթ, որ մէրս հոգատարութեամբ չէր ուզում վերցնել՝ վերքս ցուրտի չը տալու համար: Ահա էդ լաթով փաթաթուած ես մտայ ներս: Եւ ներս մտնելուն պէս զգացի, որ մթնոլորտը հանդիսաւոր է, նոյնիսկ մի քիչ սպառնալից: Մտայ ու կանգնեցի

դրան առաջ, ձեռքերս կրծքիս՝ ինչպէս կարգն է: Բիշֆիդները ինձ տեսնելով նորից ծուռ-ծուռ նայեցին: Տէրտէրը աւելի բարի հայեացք գցեց վրաս: Հէրս նստած, իսկ մէրս ձեռքերը կրծքին կանգնած, գլուխները կախ, խորախորհուրդ սպասում էին: Նրանց դէմքին լրջութեան, բայց գուցէ և զայրոյթի պէս մի բան կար: Տէրտէրը վերջապէս սկսեց.—

— Խուդան, դու մեղք ես գործել...

Նա էնպէս հանդիսաւոր ասաց էս բառերը, որ ես թեթեւ սարսուռ զգացի և ինձ թւաց, որ հիմի էլ սրանք պիտի սկսեն: Եւ գլուխս քաշ գցեցի, սպասելով իմ դատաւճռին:

— Դու մեղք ես գործել— շարունակեց տէրտէրը— ու պիտի քաւես մեղքդ: Լսում ես...

Էդ «լսում ես»-ը նա էնպէս մի պինդ ձէնով ասաց, որ ես ակամայ գլուխս բարձրացրի: Եւ որովհետեւ ինձ թւաց, որ նա ձեռքը տանում է գաւազանին, ինձ վրայ հաւաքեցի և շտապեցի պատասխանել.—

— Հրամմել ես, Տէր Հայր...

— Էդպէս, — հանգստացաւ տէրտէրը — դու մեղք ես գործել, ծանր մեղք, ու պիտի քաւես մեղքդ: Դու էդ քո պզտիկ բոյով...

Բայց նա ստիպւած եղաւ կտրել խօսքը, որովհետեւ էդ լոպէին հէրս մի չար հայեացքով ընդհատեց նրան.

— Գետինը մտնես դու, գետինը...

Որի համար տէրտէրը աչք ուրեց նրա վրայ ու պէտք տեսաւ նկատելու.

— Սերովը ախպէր, սմբը արա, սմբը— ու շարունակեց.

— Դու քու էդ պզտիկ բոյովդ երևում է մեծ սատանաներ ես ունեցել փորումդ, հարամդադան, հօ լաւ լսում ես...

Ես նորից գլուխս բարձրացրի ու շտապեցի պատասխանել.

— Հրամմել ես, Տէր Հայր...

— Էդպէս, դու քու մի մատ տեղովդ երեք տուն խառնեցիր, ու մի աղջկայ նամուս ոտնատակ տւիր...

Էս մէկին ես ոչինչ չը պատասխանեցի, որովհետեւ ինձ թւաց, որ տէրտէրը շատ խրթին է խօսում: Ի՞նչպէս թէ մի աղ- ջըկայ նամուս... ձեռնումը, երբ... Սրանք, երեւում է, ճիշտ որ միտք ունէին ինձ գծացնելու... Մինչդեռ բացի լաւութիւնից ու- րիշ բան չէի արել: Ու զարմանում էի, որ չէն հասկանում: Հենց էս ըոպէին էլ որ թողնէին, ուղիղ կերթայի փեսայ Պետրոսի մօտ, ձեռք կը բռնէի ու կասէի.— Փեսայ Պետրոս, հոգուդ մատաղ, ու- զում ես մէկ էլ բռնիր, դնքսիր ինձ, ուղում ես սպանիր, ամա էն խաչը, էն Աւետարանը, որ քու մասին մտքովս վատութիւն չի անցել. դու ինչի՞ ես նեղանում ինձ վրայ: Դրուստ է, գովել եմ նշանածիդ,— գովելը մեղք է,— ասել եմ՝ մէջքին հաջամաթ ունի, չեմ ուրանում, ամա դէ էդ բոլորը հօ սուտ չեմ ասել, էլ դրա հա- մար արուհը գցել հարկաւոր չի...

Ու հենց էդ ըոպէին էլ, որ տէրտէրը խօսում էր, ուղեցի բերանս բանամ ու էդ մտքով մի երկու բան ասեմ, գոնէ սրանց կարողանայի հասկացնել: Նոյնիսկ «ըհը» արի, կոկորդս մաքրեցի ու սկսեցի.—

— Տէր Հայր...

Բայց նոյն ըոպէին աչքովս ընկան երկու ընշաֆիդներ ի կատաղափայլ աչքերը, որ շուռ ու մուռ էին գալիս ինձ վրայ, ու հօրս շանթալից սաստը, որ դղրդաց սենեակի մէջ.—

— Ձէնդ, շան որդու լակոտ, լոբր...

Եւ ես գլուխս նորից կախ գցեցի և հազիւ կարողացայ մէկ էլ արտասանել.—

— Հրամանել ես... Տէր Հայր...

Տէրտէրը իւր պաշտօնին վայել խաղաղ ու անվրդով տո- նով շարունակեց: Նա հիմա կարծեմ դիտմամբ էր էդ տոնը վերց- րել, գտնելով, որ էդպիսի ծանր ըոպէներին ուրիշ տոն պէտքա- կան ու օգտակար չի:

— Մեղք ես գործել, բալէս, ու չը պէտք է ուրանաս: Մեղք գործելը մէկ մեղք է, ուրանալը՝ երկու մեղք: Ու հենց նրա համար,

որ մեղք ես գործել, պատիժդ էլ պէտք է քաշես: Դրուստ է, հէրդ ասում է, որ դու էդ հաջամաթի բանը պատիկ վախտդ ես տեսել, ամա դէ ճիւղ կը հաւատայ: Բանը հօ պատիկ վախտդ տեսնելը չի, բանը մեծ վախտդ ասելն է. ու թէ մտքումդ հարամադրութիւն չես ունեցել, ընչի՞ էիր ասում: Էն էլ ձեռք, մեղքի քեզ Տէր Աստ- ւած... Լաւ որ սաղ ես պրծել: Ու հիմի բանը բացել է և խալխի բերանն ընկել. ու խալխի բերանն էլ հօ գիտես, մաղարի պէս բան է,— մէկ ձէն՝ հաղար ձէն: Ու դիւի էլ հիմի ասում են, որ... որ... նահլաթ չար սատանին, բերանս ինչի՞ր էր դալիս...

Նա կանգ առաւ: Վրդովմունքից շունչը կտրւում էր: Եւ դառնալով ձերուներին, ուղեց մի երկու ծանր խօսք աւելացնել: Բայդ էդ ըոպէին աչքն ընկաւ հօրս դէմքին, որ աւելի կատաղի էր քան իրենը, ու լրջացաւ: Եւ մի անգամ էլ գտնելով իր հա- ւասարակշռութիւնը, շարունակեց.—

— Աղջկան անպատիւ ես արել, բալէս, աղջկան անպատիւ անելը հեշտ բան չի, արուհքի բան է: Դեռ հլա մինք Սարգարենց Սհակին մի թահրով հանգստացրինք, որ խեղճ հօրդ եախէն բաց թողնի, ասացինք ջահէլ է, խելքը չի կտրել. ամա դէ հօ մարդիկ իրենց նամուսից ձեռք վեր կալած չեն, որ գեղի խաղք դարձած աղջկան բերին իրենց հարս շինեն: Ու նշանը յետ տւին: Էդ էլ դրստեցինք: Ամա դէ դրանով էլ հօ բանը չի պրծնում, աղջկայ կտորած անունը մնում է: Ու էդ անունը դու ես կտորել, ու դու էլ պէտք է շինես: Ոչ մի ուրիշ ճամբայ չը կայ: Հօրդ համոզե- ցինք, Աստուած երկար կեանք տայ, շուտ համոզեց, հիմի մնում ես դու: Ասա, ուզում ես Բասիգուլին առնես, թէ չէ, ասա, շուտ...

Եւ նա էս անգամ ձեռքը լրջօրէն դաւադանին տարաւ:

Բայց ես ապշած էի, ես ոչինչ չէի հասկանում: Էդ ի՞նչ էին ասում: Ես յանկարծակիի եկայ, ես, որ մեղքս քաւելու հա- մար պատրաստ էի ընդունել ամէն տեսակի պատիժ՝ ծեծ, ֆա- լախկալ: Ու յանկարծ ինձ առաջարկում էին առնել Բասիգուլին: Խոստովանում եմ, առաջին ըոպէին խիստ ծանր եկաւ ինձ էդ

պատիժը: Ամէն բան կը մտածէի, բայց եղ մէկը... Ու թէ ինչ բան էր աղջիկ առնելը, եղ էլ չէի իմանում: Ես իմ Բողաբիս հետ խաղալը հասկանում էի, ինչպէս և ջրի գնալը, տաւարը հանդ տանելը,—բայց թէ ինչի համար են կնիկ առնում, պարզ գաղափար չունէի: Զիշտը, շատ մտածելու բան էր դա...

Ու մտածեցի: Հինգ բոլակի չափ մտածում էի ու չը գիտէի ինչ պատասխանեմ: Դա երևում է զրգոնց տէրտէրին, որ անհամբերութիւնից գաւազանը հանեց ոտքերի արանքից և դրաւ ծընկնեցի վրայ: Դա զրգոնց և հօրս, որ պայթեց.—

— Եղ լակոտին ի՞նչ ես մտիկ անում, տէր-տէր:

Ու դառնալով ինձ, նորից մի անգամ ատամները կրճատեց:

— Ո՛ւհ, գետինը մտնես դու, գետինը, թէ Սարգարենց Պետրոսը քեզ էնպէս ջարդած չէր ըլնի՛ր...

Յետոյ նորից դարձաւ հիւրերին, որոնք հիմա մի հանգիստ բարեմտութեամբ ժպտում էին, ու ասաց.—

— Տէրտէր, մենձապատիւ շնորհակալ եմ քու բարի միջնորդութիւնիդ համար: Դու էս լակոտին աղանջ մի դիւր, ու էսօր և եթ նեղութիւն քաշի Եղսան քոյրիկինց տուն ու իմ կողմից շատ բարով արա ու ասա, որ թող հազրւեն երկու օրից նշանը կը բերենք: Մենք նամուսով մարդիկ ենք ու չենք թողնի, որ մեր դրկիցի պատիւը էս շան թուլի պատճառով ոտի տակ գնայ:

Բայց հէրս շատ էր շտապում, որովհետեւ ես էլ, խոստովանում եմ, մինչ էդ արդէն համոզւել էի: Նահլաթ չար սատանին, մտածում էի, դէ որ բանը էդպէս դառաւ, ի՞նչ անենք, թող լինի: Լաւ որ ուրիշ, անծանօթ աղջիկ չի, դէ, մեր Բասիգուլն է, շատ որ չը լինի, կը նստենք հետը նորից «ապու-ապու» կը խաղանք:

Ու էդպէս էլ բանը էդ օր խէրով անց կացաւ: Մէրս դուրս գնաց ու թոնրի վրայ եռացող ջրից թէյ պատրաստեց ու դրկեց ներս: Դա ինչարկէ մեծ պատիւ էր հիւրերի համար, բայց ինձ էլ պակաս չուրախացրեց: Ու վիզիցս ընկաւ ջանս: Բանն էն

է, որ անասիլի սիրում էի էդ զահրումարը: Իսկ նա մեր տանը պատրաստուում էր կամ պատուարը հիւրերի համար, և կամ երբ հօրս զարմանալի զլխացաւը բռնում էր: Եւ որովհետեւ մենք հարուստ չէինք, էդ բարի զլխացաւը ամիսը կամ երկու ամիսը մէկ էր բռնում: Դրա համար էլ մէրս անունը դրել էր՝ չայ խմելու զլխացաւ:

Ու հիմի էլ թէյը տեսնելուս պէս մոռացայ հարսանիքս, «ապու-ապու» խաղալը, Բասիգուլին իրան, ու մտածում էի՝ ինչպէս դուրս պրծնեմ, որ մինչև համեմել իմ բաժինը խմած-վերջացրած չը լինեն: Ասի՛թը շատ չուշացաւ: Հիւրերը թէյը խմելով, սկսեցին գատողութիւններ տալ «ապամի» փշանալու, նոր դուրս եկած էդ ջահէլների բարքերի, յետոյ էլ՝ արուրի ու նամուսի մասին, որ վերացել էր աշխարհից: Եղ խօսակցութեան ժամանակ ես նկատում էի, որ խեղճ հէրս աւելի լաւ կը համարէր գետինը մըտնէր, քան իր օջախում էդ տեսակ խօսքեր լսէր: Բայց ես էլ չը համբերեցի և տեսնելով, որ գլուխները խօսակցութեամբ տաքացել է, դուրս պրծայ և թոնրատուն ընկայ ճիշտ էն բուլէին, երբ մէրս վերջին պուրկներն էր լցնում:

— Բա ի՞նչ,—բղաւեցի ես շէմքից:

Մէրս աչքերը ուրեց վրաս ու բղաւեց.—

— Շատ մեծ գործ ես արել, չայ էլ ուզում ես, ջունամարդ էլնձ...

Բայց այնուամենայնիւ մի աման լցնելով՝ տուաւ ինձ:

Ինչ ուզում էք ասէք, էդ թէյը ամբողջ օրւայ դէպքերի մէջ ինձ համար ամենից հաճելին ու դուրեկանն էր:

V

— Էդպէս, բալէքս, ինձ նշանեցին Բասիգուլի հետ: Մենք ինչարկէ նրանից յետոյ խրժիկ ու ապու-ապու չը խաղացինք, Երբ մարդ նշանւած է, կամաց-կամաց հասկանում է, թէ ինչի համար

է նշանաւ: Մանաւանդ որ տարիքն էլ հետզհետէ հասնում է: Իսկ երբ պսակւում է, դէ, պարզ է, ուզի-չուզի ամէն բան կիմանայ: Իսկ մենք հօ երեք-չորս տարի էլ նշանաւ մնացինք: Հէրս, որ էդ նշանակալից դէպքից յետոյ հաշուեց հետս և վերջ տաւ իր ըս-պառնալիքներին, չէր շտապում, ասելով որ՝ թող մնան, մէջքները պնդանայ: Չէին շտապում և Եղսան քոյրիկենք, որ վերջապէս հաշուել էին հետս: Եղսան քոյրիկը նոյնիսկ նշանիս գիշերը ինձ մի լաւ պաշեց ու հետն էլ, արցունքն աչքերին, օրհնեց. —

— Ի՞նչ ասեմ, բալէս, դամաթդ էր, բարով խէրով վայելես...

Հետս չէր հաշուում միայն Բասիգուլը, որ չը գիտիմ ինչու, քիթը շարունակ վեր ցցած էր պահում: Բայց էդ էլ ժամանակաւոր էր և վերջ ի վերջոյ նրա հետ էլ հաշուեցինք ու հաշա էլ ապրեցինք մինչև վերջ...

Նա գլուխը կախեց: Աչքերում թեթեւ ջրիկ փայլեր կային: Չայնի մէջ, վերջին բառերին, նոյնիսկ զոզ էր զգացւում: Մեր հայրը նորից տխրում էր:

Բայց մենք թոյլ չը տւինք: Մենք կատակեցինք. —

— Հալբաթ չէր սիրում քեզ, հայրիկ, ու դրա համար էր որ...

Թրջւած աչքերով՝ նա լրջացաւ:

— Սիրում... Ես հօ ասեցի, որ գեղում սիրել-միրել չը կայ: Այ, քաղաքում երեսուն տարի է տեսնում եմ՝ սէր կայ, ու էդ սէրով ջահէլները գժւում են, խաղեր կապում ու փողոցներն ընկնում, ամա վերջն էլ տեսնում ես ոչինչ չի դուրս գալիս: Գեղում սիրել-միրել չը կայ, ամա դէ մենք օղորմած հոգու հետ յիսուն-հինգ տարի ապրեցինք ու մի անգամ էլ է իրար խաթրի չը կպանք:

Եւ արցունքների միջից, որ շարունակում էին լցնել նրա կողերը, նա ժպտում էր:

Յետոյ շարունակեց.

— Ու նշանած ժամանակն էլ, որ քիթը բարձր էր պահում, ընդուր համար էր, որ շատ նեղացել էր ինձանից, թէ՛ և թէ՛ դու իմ խաթրս ունէիր, ինչի՞ էիր էդ տեսակ ամօթ բաները ասում

նշանածիս: Ու պսակւած ժամանակն էլ միշտ էդ Պետրոսից փախչում էր: — «Ընչի՞ ես փախչում, այ կնիկ», ասում եմ. ու նա թէ՛ — Վո՛ւյ, խողը գլխիս, ախր դու ասել ես նրան իմ հաջամաթի մասին:

Այդ բացատրութեան վրայ մենք բոլորս ծիծաղեցինք:

Յետոյ հառաչելով աւելացրեց. —

— Մուտ է, ամենը, ամենը ինչ որ էս աշխարհում լինում է, դամաթի բան է ..

Ու սրբիով աչքերը, լեցի: Մենք էլ լեցինք: Տխուր էր:

Յետոյ կամացուկ շշնջաց. —

— Օղորմած հոգու մէջ խօսքը միտս եկաւ, որ մեռնելուց ասաւ:

— Ի՞նչ խօսք, հայրիկ:

— Մեռնելուց մի օր առաջ կանչեց ինձ ու ասաւ. — Պուզան, ես կը մեռնեմ, ջան քեզ. ջան բալէքիս, ու դու էլ, ասաւ, կը բախշես ինձ իմ մեղքերս... — Ի՞նչ մեղք, ասում եմ ես զարմացած: — Դէ, խօսմ իմանում ես, էն էլի՛...

Նա կարծես ամաչում էր ասել, իսկ ես չէի հասկանում: Ես էն գլխից մի քիչ դժար հասկացող մարդ էի: Եւ նա ստիպւած եղաւ բացատրել. —

— Ո՞նց չես իմանում, էն էլի՛, որ ջահէլ վախտս սխալեցի ու... ու... խօսք տի Սարգարենց տղին...

Ես չիմացայ ինչ ասեմ: — Բասիգուլ ջան, ասում եմ, էդ ի՞նչ մեղք բան է որ... յիսունհինգ տարի առաջւայ բանը...

Եւ նա ասաւ մէ բան, որ ես մինչ օրս էլ չեմ կարողանում հասկանալ:

— Ի՞նչ, ի՞նչ ասաւ, հետաքրքրեցինք մենք:

— Դու լաւ արիր, ասում է, որ էն լանդահոռին ասեցիր իմ հաջամաթիս բանը... Թէ ասած չլնէի՛ր...

Ես ապշեցի:

Ու էդ ասողը էն կնիկն էր, որ իմ էդ խօսքիս համար քիթը էնքան վախտ կախած էր պահել ու նրանից յետոյ էլ, երբ

Սարգսրենց տղին տեսնում էր, փախչում էր ամթից: Բայց ես շատ անհասկացողն էի ու խեղճ պառաւը ստիպւած եղաւ նորից բացատրել.—

—Օ՛ք, դու էլ ի՜նչ դժար ես հասկանում, Սուդան, ախր ես քեզ էն պիտից սիրում էի... բա չէիր հասկանում...

...Ու հիմի ես մտածում եմ, որ էդ մէկը նրա խօսքը չէր, էդ սովորեցրած բան էր — էդ «սիրելու» բանը: Ու սովորեցնողը քաղաքն էր: Երեսուն տարւայ մէջ օղորմած հոգին հալրաթ գրանից աւել բան չէր գտել սովորելու, ի՜նչ արած...

Այդ ժամանակ թարթիչներէից կախած կաթիլները կամացուկ սահեցին ցած՝ նրա ծեր այտերի վրայ և նա — Հողամարդը, յաւիտենական մանուկը, մեր հայրը — զլուխը ծոց, հանեց կարմիր աղլուխը ու սրբեց աչքերը...

Վ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան
NL0372494

61.525

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ԵՒ ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

«ՆՈՐ ԷՋ» № 1, Իրանահայ ~~երթ~~ գրողների ժողովածու. գինը՝ 5 ռ.

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ Է ՅԱՆՋՆԻԱԾ

«ՆՈՐ ԷՋ» ժողովածուի 2-րդ համարը

ԳԻՆՆ Է 2 Ռ.

ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Թեհրան, Դաւթեան դպրոց, Մ. ՂԱՐԻԲԵԱՆԻՆ